

ԲԱՆԱՎԵՆ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ



ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅՐ ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ԱՆՓՈՓՈՒՄ ԴԻՄԵ

Ս. Ա. ԳԱԼՍՏՅԱՆ

Բայերը, ինչպես արձանագրված է հայերենի բառակազմությանը մվիրված մի շարք ուսումնասիրություններում, բուն (իսկական) բարդման և ածանցման դեպքում բառակազմական բաղադրիչ են դառնում գերազանցապես մաքուր (անաժանց) բայական արմատների ձևով՝ կամ, գրաբարատիպ որոշ կազմություններում, կատարյալի բայահիմքերով, ինչպես՝ **հասնել** – անհաս, երկնահաս, հասույթ, **բուժել** – ակնաբույժ, բուժում, բուժիչ, բուժական: Հմմտ. նաև՝ անմոռաց, մոռացություն, ինքնամոռաց, մուրացկան, ուշակորույս, երախտահատույց, կացություն, ուռուցիկ, որոնց գերակշիռ մասը գրաբարյան դասական շրջանի կազմություններ են՝ և գործում բառապաշարի նորանոր կազմությունների տիպար են հանդիսանում (արճաղաց, ալրաղաց, ինքնուսույց ևն):

Միաժամանակ չէր կարող ուշադրությունից վրիպել, որ անկախ դերբայներից հատկապես անորոշը բառակազմությանը կարող է մասնակցել նաև առանց որևէ փոփոխության՝ բուն (իսկական) բարդություններում և ածանցավոր բառերում պահպանելով ոչ միայն ներաժանցները, այլև բայական բառակազմական ածանց - վերջավորությունը (-ել, -ալ):

Գրաբարյան նման կաղապարների գիտական հանգամանալի քննությունը կարելի է գտնել Լ. Ս. Հովսեփյանի նշված աշխատությունում, հատկապես «Հիմքակազմություն» բաժնում և ամփոփիչ աղյուսակներում:

Ինչպիսի՞ն է վիճակը արդի հայերենում:

Արդի հայերենում անորոշ դերբայը որպես բառակազմական անփոփոխ բաղադրիչ կարող է հանդես գալ և՛ վերլուծական, և՛ համադրական բաղադրություններում:

Վերլուծական բարդություններում, որոնց բաղադրիչները գերազանցապես նաև անկախ գործածություն ունեցող բառեր են, անփոփոխ անորոշ դերբայը բառակազմությանը մասնակցում է երեք կաղապարներում՝ **ա.** որևէ այլ խոսքի մասի բառ + անորոշ դերբայ՝ կազմելով հարադրավոր բայերի մի ենթատեսակ (ձեռք առնել, աչքից ընկնել, կանաչ կապել, վրա վազել, ման գալ ևն)։ **բ.** անորոշ դերբայ + տալ (գրել տալ, վազել տալ ևն)։ **գ.** անորոշ դերբայ + անորոշ դերբայ (աղաչել – պաղատել, զուգվել – զարդարվել, գնալ – գալ, ծլել – ծաղկել ևն)՝ բոլոր երեք դեպքերում էլ կազմելով բայեր: Նշված երեք կաղապարներն էլ մանրամասնաբար ուսումնասիրված ու ներկայացված են Ա. Ս. Մարգարյանի «Հայերենի հարադիր բայերը»

¹ Տե՛ս, օրինակ, Լ. Ս. Հովսեփյան, Գրաբարի կազմությունը, Եր., 1987, էջ 74, Ս. Ա. Գալստյան, Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, Եր., 1987, էջ 241:

² Տե՛ս Լ. Ս. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 78:

(Երևան, 1966) և «Ժամանակակից հայոց լեզու» (Երևան, 1990) աշխատություններում: Հիմքակազմության և բայական ձևակազմության տեսանկյունից նկատելի է, որ եթե **ս** և **ք** խմբի կառույցներում վերջին անդամների դիմաթվային վերջավորությունների փոփոխությամբ են բայաձևեր կազմվում (ընդառաջ գնալ // -գնաց // -կգնա // -չգնա ևն), իսկ **բ** կաղապարի հիմք անորոշ դերբայը անփոփոխ է մնում (երգել տալ // -տվեց // -է տալիս // -կտա ևն), ապա երրորդ խմբում անվանական ձևակազմության՝ հոլովման և հոգառության է ենթարկվում երկրորդ անդամը: Օրինակ՝ Նա դեռ պետք է սովորեր հարսնավարի նստել-վեր կենալ, եփել-թափել ... Այդպես՝ եփել-թափելով, նստել-վերկենալով էլ կյանքը անցկացրեց: Նստել-վերկենալս նրան դուր չի գալիս ևն:

Բուն (իսկական) բարդություններում և ածանցավոր բառերում, առանց բայակազմ-վերջադրական և հիմքի մեջ մտնող ածանցների կորստի, անորոշ դերբայը մասնակցում է հետևյալ կառուցվածքային կաղապարներով կազմություններին.

ս. նախադաս սերող հիմք + վերջածանց՝ կազմելով դերբայական ձևեր և ոչ բայ խոսքի մասեր.

ք. վերջադաս սերող հիմք + նախածանց՝ ձևավորելով բառակազմական վերջին քայլում նախածանցի հավելմամբ բաղադրված բայեր.

գ. սերող (ձախակողմյան) հիմք բուն (իսկական) բարդություններում՝ կազմելով ոչ բայ խոսքի մասերի բառեր.

դ. բաղադրող (աջակողմյան) հիմք բուն (իսկական) բարդություններում՝ կազմելով բայեր³:

Քննենք կաղապարները նշված հերթականությամբ:

ս. Անորոշ դերբայ + վերջածանց: Այս կաղապարում բայական խոսքամասային (-ել // -ալ) ածանցի հավելումը անփոփոխ անորոշի հիմքին բացառվում է, թեև ածանցի իմաստի մթազման կամ խոսքամասային փոխանցման դեպքում այլ խոսքամասային հիմքերին կարող է ավելանալ նույնիսկ նույն ածանցը, ինչպես՝ գոյականական, ածականական:

Ըստ Լ. Հովսեփյանի գրաբարի բառակազմությունը ներկայացնող համապարփակ ուսումնասիրության՝ դասական գրաբարում հատկապես գործուն են անորոշ դերբայ + ի(իք) և անորոշ դերբայ + ություն կաղապարները: «Սկզբունքորեն յուրաքանչյուր բայ կարող է ստանալ այս երկու ածանցները»: Մրանից, իհարկե, բոլորովին չի բխում, որ բոլոր բայերը գրաբարի բառարաններում -ի (ք)-ով կամ -ությունով գրական վկայություններ ունեն: Դա պարզ երևում է հետևյալ զուգադրումներից. **կասկածել** բայից վկայված է կասկածելի, ինչպես և անկասկածելի, բայց, օրինակ, կա **ծառայել**, անծառայելի, բայց չի վկայված ծառայելի, **կառչել** - չկա կառչելի, բայց կա անկառչելի, **անվանել** - չկա անվանելի, բայց վկայված է անանվանելի ևն:

Մյուս ածանցներով (-ական, -աբար, -ոյթ, -ումն, -իկ) և անորոշի անփոփոխ հիմքերով բաղադրությունները դասական գրաբարում սահմանափակ են կամ եզակի:

³ Քննել-մնել («Քննել-մնել չեն հասկանում» - Հ. Թումանյան) կաղապարին չենք անդրադառնում՝ հաշվի առնելով հնչյունական փոփոխությունը:

⁴ Լ. Ս. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 80:

Անորոշ դերբայ + ի(իք) կառույցի խոսքիմաստային արժեքի որոշումը և՛ գրաբարի, և՛ աշխարհաբարի նոր քերականություններում իրարամերժ տարակարծություններ է առաջացրել: Գրաբարի լավագույն քերականություններից մեկում⁵ այն համարվում է ապառնի դերբայ առանց որևէ վերապահման, Հ. Մ. Ավետիսյանի և Ռ. Ս. Ղազարյանի «Գրաբարի ձեռնարկում»՝ «քայանուն ածական ու գոյական»⁶, Լ. Ս. Խաչատրյանի և Գ. Բ. Թոսունյանի «Գրաբարի դասագրքում»՝ ապառնի դերբայ՝ «Ի-ով ձևերը վաղուց վերածվել են գոյականի... և ածականի (...)⁷ վերապահությամբ: Անհետաքրքիր չի լինի նշել, որ անորոշ դերբայ + ի(իք) կառույցը գրաբարում, ինչպես նաև արդի հայերենում, որպես բառակազմական հիմք մասնակցում է հետագա բառակազմությանը հատկապես ան+ (ի) (անհաճելի, անատելի ևն), վերջինս էլ՝ [ան + (-ի)]ություն կաղապարներում⁸՝ գերազանցապես ալի/ելի-ի հապավմամբ (անխոնարհելի // անխոնարհութիւն, անխնայելի // անխնայութիւն, որոնք գրաբարում մեկնաբանվում են *չխոնարհիլն, չխնայելն* ⁹): Առաջին կաղապարի մասին առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում Գ. Ջահուկյանի ժամանակագրական դիտարկումը. «Թեև անելի կաղապարով կազմված բառերը վերագրվել են ետդասական շրջանին, բայց դասական շրջանում ան-ելի կաղապարներով կազմությունների առկայությունը ևս ... ենթադրել է տալիս այդ կաղապարներով կազմությունների թերևս ավելի վաղ՝ հնագույն շրջանի վերջերին հանդես գալը»: Նույնքան արժեքավոր է Գ. Ջահուկյանի ոճական բնութագրումը. «Մրանք ակնհայտորեն պատկանել են բարձր ոճին և տարածված են եղել ստանդարտ (ավելի ուշ՝ գրական) լեզվում»¹⁰:

Արդի արևելահայ գրական լեզվի նոր քերականություններում անորոշ + ի կաղապարի կազմությունները արդեն իսկ համարվում են ածականներ (սիրելի, ատելի, տանելի, հասկանալի ևն) և խոսքամասային փոխանցումով՝ գոյականներ (հայելի, գումարելի, հանելի ևն):

Վիճարկելի է դեռևս անորոշ դերբայ + իք կառույցի խոսքամասային արժեքը: Մ. Ասատրյանը և Է. Աղայանը այս կառույցը համարում են դերբայ հիմնականում այն պատճառաբանությամբ, որ այն կերպային հակադրություն է ստեղծում հարակատարի և ենթակայականի հետ համադրվելիս (կառուցված – կառուցվող – կառուցվելիք, կատարված – կատարվող – կատարելիք ևն), իսկ Ս. Աբրահամյանը այն առհասարակ դերբայ չի համարում¹¹: Անորոշ դերբայ + իս կառույցը դերբայ են համարում բոլորը, իսկ անորոշ դերբայ + ու կառույցի որոշ գործառությունների վերաբերյալ կան մասնակի տարակարծություններ: Սահմանական եղանակի ապառնի և անցյալի ապառնի (կատարելի, ապակատար) դերբայ (ձևաբայ) է համարվում,

⁵ Տե՛ս Ա. Ս. Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, Եր., 1958, էջ 142:

⁶ Հ. Մ. Ավետիսյան, Ռ. Ս. Ղազարյան, Գրաբարի ձեռնարկ, Եր., 1986, էջ 12:

⁷ Լ. Ս. Խաչատրյան, Գ. Ս. Թոսունյան, Գրաբարի դասագիրք, Եր., 2004, էջ 164:

⁸ Տե՛ս Ս. Ա. Գալստյան, նշվ. աշխ., էջ 190-200:

⁹ Տե՛ս «Նոր բառգիրք հայկազեան լեզուի»:

¹⁰ Գ. Բ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Եր., 1987, էջ 357:

¹¹ Տե՛ս, հատկապես, Ս. Աբրահամյան, Ժամանակակից հայերենի քերականություն, Եր., 1975, էջ 142-144, Է. Աղայան, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Եր., 1967, էջ 353-360:

թեև, հասկանալի է, անորոշի սեռականից պատմականորեն ծագած, իսկ **ընթերցելու գիրք** (= ընթերցանության գիրք), **հաղորդակցվելու միջոց** (= հաղորդակցության միջոց) և նման կառույցներում անորոշ + ու կազմություններում, ինչպես ցույց են տալիս փոխակերպված բառակապակցությունները, սեռականի ձևը անժխտելի է: Երկրորդական վերլուծական ժամանակներում առկա նույն բառաձևը ևս (գնալու լինեմ // - լինես // - եղա ևն), ըստ երևույթին, ապառնի պիտի համարվի, որպես ժամանակաձև կազմող բաղադրիչ, թեև փաստարկներ կան նաև անորոշի սեռականի օգտին («եթե ժողովի՝ նիստի լինեմ» - խսկց.):

Կապակցված խոսքից դուրս որոշակի դժվարություններ են ներկայացնում վերջածանցավոր բառերում գրաբարի անցյալ դերբայի -եալ վերջավորության օրինակապես հնչյունափոխության հետևանքով ստեղծվող անորոշ դերբային համազիր համանուն հիմքերը: Գործը հեշտանում է, երբ ունենք տարարմատ հակադրություն՝ լինել-ություն // եղել-ություն: Համատեքստից դուրս հեշտ է որոշել նաև, որ **կապարեղ-ությունը կատարյալ լինելն է**, այսինքն՝ **կապարեղը-ը կապարեալ-ի** հնչյունափոխական տարբերակն է, **առաքել-ությունը՝ առաքեալ-ի՝ առաքված լինելը**: Համատեքստից դուրս հազիվ թե հնարավոր է արդի հայերենի տեսանկյունից վճռական խոսք ասել աճելություն, ընդունելություն, ատելություն և նման կառույցների հիմքերի մասին: Արդի հայերենում գրաբարյան դասական շրջանի եկելություն, կամելություն, կարծելություն, ունելություն, սիրելություն, օծելություն ևն հնաբանություններ են և վաղուց մոռացված են: Հին են նաև լալական, լալյուն, խոսակցական՝ լալկան և գավառական՝ լալուկ կազմությունները:

Ժողովրդախոսակցականի հետ են կապվում նաև -ոցի ածանցով կազմված (հաճախ մանկական) խաղերի անունները՝ բռնելոցի, մրելոցի, նստելոցի, պահվելոցի, պառկելոցի, գրելոցի ևն, ինչպես և արդեն վաղուց գրական դարձած հանելուկ և շուտասելուկ կազմությունները:

բ. Նախածանց + անորոշ դերբայ: Կաղապարի կառուցվածքը թելադրում է, որ որպես արդյունք պետք է կազմվեն բայեր:

Չուտ ձևային մոտեցման դեպքում նման ձևությային կազմ ունեցող բայերը կարելի է բաժանել երեք խմբի:

1. Բաղադրության մինչև -ալ/-ել մասը որպես ինքնուրույն բառ գոյություն և գործածություն ունի, այսինքն՝ բայը կազմվել է նախածանցավոր հիմքին -ալ/-ել բայակազմիչ ածանց-վերջավորության հավելմամբ: Այսպես են կազմված, օրինակ, համաբան // համաբանել, համագործակից // համագործակցել, հակադաս // հակադասել, հակադարձ // հակադարձել, ստորադաս // ստորադասել, գերակա // գերակայել: Բայերի սեռը նկատի ունենալով դրանք ըստ իմաստի կարելի է փոխակերպել « հիմքի անվանաձևը դառնալ՝ լինել՝ անել՝ դարձնել ևն» բառակապակցություններով, ինչպես՝ համագործակցել՝ համագործակից դառնալ՝ լինել ևն: Ասվածից պարզ է, որ այս կամ այսպես ընկալվող բայերի հիմքն է նախածանցավոր:

2. Հայոց լեզվի արդի փուլում, մասնավորապես գիտատեխնիկական և հասարակական-քաղաքական գրականության մեջ, չափազանց գործունե են դարձել հատկապես հունաբան հայերենից ժառանգված նախածանցները, նույնիսկ նրանք, որոնք գրաբարում անարտադրողական կամ պակաս արտադրողական են եղել: Այդպիսի նախածանցներով կազմություններ են՝

ապամագնիսանալ, առկայծել, արտանկարել, գերագնահատել, ենթաբա-
 ժանել, հակակշռել, համախմբել, մակագրել, ներքաշել, ստորադասել, վե-
 րագնահատել, տարածայնել, փոխհատուցել ևն, ևն: Ակնհայտ է, որ այս և
 նման կառույցներում բայերը կազմված են բառակազմական վերջին բայ-
 լում նախածանցի հավելմամբ: Նշված ածանցներից հատկապես խիստ
 գործուն են վեր/ա- (վերարտադրել, -ընծայել, -թևել, -բեմադրել, -ընտրել,
 -բաշխել ևն), ներ/ա- (ներխուժել, -մուծել, -ազդել, -աճել, -գրավել, -քաշել
 ևն) և հակ/ա- (հակաճանել, -կշռել, -շփել, -որոշել ևն) ածանցները: Մյուս
 նախածանցներով ևս բազմաթիվ հին ու նորակազմ գործածական բառեր
 կան. նշենք միայն մի քանիսը. անդրաձգել, ապագայնանալ, առգրավել,
 արտապատկերել, գերակատարել, մակագրել, փոխակերպել ևն, ևն: Նա-
 խածանցավոր նման նորակազմությունները սովորաբար պահպանում են
 հիմքի քերականական հատկանիշները, բայց իմաստափոխության կամ ի-
 մաստահավելման դեպքում հնարավոր են նաև սեռային անցումներ: Օրի-
 նակ՝ կանգնել – վերականգնել¹²:

3. Այս խմբի բայերը կազմության տեսակետից երկակի մեկնաբանու-
 թյուն կարող են ստանալ, այսինքն՝ մտածվել և՛ որպես նախածանցավոր
 հիմք + ել, և՛ նախածանց + անորոշ դերբայ կառույցներ: Հասկանալի է, որ
 յուրաքանչյուր դեպքում կփոխվի բառի ներքին ձևը: Այսպիսի բայեր են գե-
 րաճել, ներամփոփել, ներգաղթել ևն: Այս բայերից, օրինակ, գերաճելը կա-
 րող է նշանակել՝ 1. գերաճ տալ (գերաճ-ել) և 2. սպասվածից՝ բնականոնից
 ավելի աճել (գեր-աճել): Նույնկերպ և մյուսները:

Ոչ հունաբան ծագման ածանցներից ան-ով ժողովրդախոսակցական
 ծագմամբ մի շարք բառեր կան, որոնք մտել են նաև ընդհանուր (ո՛չ բարբա-
 ռային) բառարաններ. դրանից են անկտրել («Աղջիկը որ կա՝ անկտրել ձմե-
 րուկ է»), անգրել, անբեկանել (կա նաև անբեկ), անլռել (ուճի բրբ. նշում),
 անխաբել (կա նաև անխաբ), անկրկնել, անխորշել (կա նաև անխորշ)՝ բո-
 լորն էլ ըստ գործածության ածականներ կամ մակբայներ:

գ. Անորոշ դերբայը սերող հիմք բուն (խկական) բարդություններում:
 Որպես արդյունք, բնականաբար, ստացվում են ոչ բայ խոսքի մասի բառեր:
 Այս կաղապարի բարդությունները դրսևորում են գործառական, իմաստա-
 յին և կառուցվածքային հետաքրքրական յուրահատկություններ: Դասա-
 կան գրաբարում, ըստ Լ. Ս. Հովսեփյանի¹³, կաղապարը վկայված է եզակի՝
լալեկող «լալատեղ, ողբավայր» բարդ բառով (ետող-ը, ըստ Արմատականի,
 տեղ բառի բառակազմական տարբերակն է), թեև հետագա գրաբարի շրջա-
 նից ունենք լալականչ, լալահառաչ, լալատեղ բուն (խկական) բարդություն-
 ներ և լալագին, ա., լալական, գ., լալի, ա., լալին, գ., լալիք, լալութին, լա-
 լումն, բոլորն էլ գոյական, լալօնք¹⁴, գ., ինչպես նաև արդեն աշխարհաբարյան
 լալածայն, լալախառն, լալական, լալականչ, լալակոհինչ, լալահայաց, լա-
 լախառաչ ևն: Ինչպես երևում է բերված օրինակներից, կաղապարը աստի-
 ճանաբար գործուն է դարձել, և արդի հայերենում հաճախ այս կաղապարի

¹² Բայակազմ նախածանցների մասին տե՛ս Գ. Բ. Չախուկյան, Ժամանակա-
 կից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Եր., 1989, էջ 169-172,
 Մ. Ա. Գալստյան, նշվ. աշխ., էջ 188-239:

¹³ Լ. Ս. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 80:

¹⁴ Գրաբարյան բոլոր վկայությունները ըստ «Նոր բառգիրք հայկազեան լեզուի»:

նույն սերող կամ բաղադրող հիմքերից կազմվել ու կազմվում են բարդ բառերի բաց, այսինքն՝ նոր բաղադրությունների կազմման հնարավորությունը չբացառող, շարքեր: Ըստ որում, երբ ընդհանուրը տվյալ բառակազմական շարքի համար սերող հիմքն է, ըստ էության, թվարկվում են անորոշ դերբայով արտահայտված հատկանիշը կրող կամ կրելու ներունակություն ունեցող, նրան առնչվող առարկաների կամ հասկացությունների անվանումները (ինչպես՝ բժշկական՝ խոսելախանգարում, խոսելավարժություն), իսկ շարքի ընդհանուր բաղադրող հիմքի դեպքում՝ նրա անվանածի հատկանիշները (ինչպես՝ սիրելացավ, գրելացավ ևն):

Այս կաղապարի սերող հիմքերից առավել գործուն են խոսել-ը, որով ունենք խոսելակերպ, -ձև, -մոլ, -ոճ, -տանջ, -տուն, -փող ևն, այլ բժշկական նշումով՝ խոսելավախ, խոսելախտ, խոսելախանգարում, խոսելավարժություն ևն, և գրել-ը (գրելաթուղթ, գրելաոճ ևն), բաղադրող հիմքերից՝ -կերպ-ը, (գործելակերպ, վարվելակերպ, ապրելակերպ ևն), -ձև-ը (գործելաձև, վարվելաձև, ապրելաձև ևն), -ցավ-ը (սիրելացավ, գրելացավ, խոսելացավ, խմելացավ ևն՝ բոլորն էլ ժողովրդախոսակցական կամ դիպվածային երանգավորմամբ) և -սեր-ը (գրելասեր, իշխելասեր, ծխելասեր, ուտելասեր ևն): Հմտ., նաև արդեն վաղուց գրականացած՝ վարելահող, վարելատեղ, վառելանյութ, ինչպես և նորաբան՝ նստելավարձ, կանգնելավարձ, թափելավայր, թափելատեղ ևն¹⁵, ինչպես նաև՝ ժողովրդական «օդի հարկ»-ի լրագրային թռչելահարկը:

Ակնհայտ է, որ այս կաղապարի բարդություններում, ինչպես ցույց են տալիս բառակապակցական փոխակերպումները, անորոշ դերբայը պահպանում է իր գոյականական հատկանիշը՝ հանդես գալով սեռականի ձևով, երբ բաղադրող հիմքը գոյական է (վարելահող // վարելու հող, խմելացավ // խմելու ցավ, նստելավարձ // նստելու վարձ ևն) և բայական բնույթը՝ դառնալով խնդրային լրացում, երբ բաղադրող հիմքը բայական է (ուտելասեր // ուտել սիրող, ծխելասեր // ծխել սիրող ևն):

դ. Անորոշ դերբայը բաղադրող հիմք բուն (խկական) բարդություններում: Բնականաբար, այս կաղապարին չեն պատկանում այն բայերը, որոնց առանց բայական խոսքամասային ածանցի հիմքը ինքնուրույն գործածություն ունեցող բարդ բառ է, և բայը կազմվել է բարդ բառին բայական ցուցիչ ավելացնելու միջոցով, ինչպես՝ քաղցրահամ // քաղցրահամել, վարձակալ // վարձակալել ևն: Կաղապարին հատուկ կազմություններում բայերի առանց -ել // -ալ մասը բառային ինքնուրույն գործածություն չունի, ինքնին վերցրած բարդ բառ չէ, այլ ստացվել է բաղադրող հիմքի վերածվող բային սկզբից արմատահիմք կամ բառ ավելացնելու միջոցով: Դասական գրաբարում մման եզակի կազմություն է արևագալը, թեև աստիճանաբար տարածվել են ինչպես վերևում նշված կազմությունները (արմատախիլ // արմատախիլեմ, երկայնաբան // երկայնաբանեմ ևն), այնպես էլ հատկապես՝ աշխարհաբարում լայն տարածում ստացած՝ բառակապակցությունների վերածումը բարդ բառերի (ինչպես գրբ. երկիր պագանեմ // երկիրպագանեմ // երկրպագել ևն): Այսպիսի կազմություններ են՝ դասավանդել (= դասը ավանդել), բարենմադթել (< բարի մադթել), ընծայաբերել (< ընծա բերել),

¹⁵ Նորաբան կազմությունների մասին տե՛ս հատկապես Ա. Մարտիրոսյան, Արդի հայերենի նորաբանությունների բառակազմական կաղապարները, Եր., 2007, էջ 90-99:

եղյամակալել (< եղյամով կալել), այլև՝ թևակոխել, հեղափոխել, գնդակոծել, հասկակալել, լվացազտել, լվացամաքրել, անդամագրել, անդամահատել, լուսաքողարկել, լրատնկել, եզրակտրել ևն, ևն:

Արդի հայերենի բառակազմության, հատկապես տեխնիկական գրականության մեջ նկատվում է հետաքրքրական մի երևույթ. կազմվում ու գործածական է դառնում բայանուն՝ գործընթացի կամ գործիքի անունը, այնուհետև դրա հիման վրա կազմված բայը: Օրինակ՝ խողովակաեռակցում // խողովակաեռակցել, արյունածավալաջերմաչափիչ // արյունածավալաջերմաչափել ևն: Այստեղ հնարավոր է մտածել նաև բաղադրման այլ ընթացք. կցել→ եռակցել – եռակցում – խողովակաեռակցում ևն:

Վերջնական խոսքը, իհարկե, պատկանում է պատմական լիակատար բառարանին, որը շարունակում է մնալ երազանքների երազանք:

Այս կաղապարի իրապես բարդ բայերի ձևակազմական առանձնահատկությունը այն է, որ ձևակազմության համար որպես փոփոխվող բաղադրիչ է դառնում երկրորդ բաղադրիչը (գնդակոծել // գնդակոծեմ // գնդակոծեցի), ինչպես գոյականների դեպքում (այսօր // այսօրվա, մորաքույր // մորաքրոջ ևն), այսինքն՝ բայական -ել ածանցը միաժամանակ հանդես է գալիս և՛ որպես բաղադրող հիմքի կազմիչ, և՛ ամբողջ բարդ բայի:

Այդ կաղապարի ինքն- և կիսա- սերող հիմքերով բաղադրություններում, որոնք արդի հայերենի բառարաններում զգալի թիվ են կազմում¹⁶ (ինքնակրթել, ինքնաբռնադատել, ինքնասիրահարվել, ինքնափոշոտել ևն, կիսաբարձրանալ, կիսաբացել, կիսապառկել, կիսաժպտալ, կիսակոճկել ևն), սերող հիմքերը աստիճանաբար ածանցակերպային բնույթ են ստանում:

Ավելորդ չեմ համարում ավելացնել նաև, որ արդի հայերենում գործուն կատարելագործել բայի սերող հիմքը գրաբարյան հնչյունափոխված անցյալ դերբայն է (=կատարյալ դարձնել)՝ ածականական արժեքով, որը գրաբարի համար օրինաչափ էր (հմմտ. կատարելաբերել ևն):

Գործունության ու արդյունավետության տեսակետից անդրադառնալով խնդրին՝ կարելի է եզրակացնել, որ քննարկված չորս կաղապարներից համընդգրկուն են մնում անորոշ դերբայ + ի, իք, ու, իս մանրակաղապարները՝ թեև արդյունքի այլ արժևորմամբ, հատկապես ծավալվում ու նորանոր բաղադրություններ են կազմվում նախաձանց + անորոշ դերբայ և սերող հիմք + անորոշ դերբայ կառույցներով:

С. А. ГАЛСТЯН – Инфинитив в качестве словообразовательной неизменяемой основы. – В статье анализируются те словообразовательные модели аффиксальных и сложных слов, в которых инфинитив в качестве компонента выступает не чистым корнем или составной основой аориста (անտես, սրճադաց), как в большинстве случаев, а без каких-либо изменений, т.е. моделью: 1. инфинитив + суффикс (սիրել-ի), 2. префикс + инфинитив (վեր-ընտրել), 3. инфинитив + второй компонент собственно сложного слова, 4. первый компонент ... + инфинитив.

¹⁶ Նշված կաղապարներից կիսա-ով Հայկազյանում ունենք միայն *կիսացուցանել*, ինքնա-ով՝ *ինքնապիրել*, *ինքնակենդանանալ*, *ինքնասպտածանալ*, *ինքնաէանալ*, մի քանի բայեր էլ վկայված են անցյալ դերբայի ձևով (ինքնադատապարտեալ, -դրուագեալ, -ձեռնադրեալ, -հայտնեալ)՝ ածականական գործառնությամբ: